



Հրատարակուել է
Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան
հովանաւորութեամբ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼԳ. ՏԱՐԻ 2019

ՀԱՅ ԱՇՈՒՂՈՒԹԵԱՆ ՍԿՋԲԵՆԱԻՈՐՈՒՄԸ ԵՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ

Հենրիկ Բախչինեան

Աշուղութեան սկզբնաւորումը քննելուց առաջ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նրան նախորդած գուսանութեան երեւոյթին:

Գուսան բառը՝ «երգեցիկ, երաժիշտ» իմաստով, փոխառուած է պահլաւերէնից¹ եւ արդիւնք է հայ-պահլաւական հնագոյն պատմամշակութային առնչութիւնների: Բառը գործածուած է դեռեւս հինգերորդ դարի հայ մատենագրութեան մէջ (Փաւստոս Բուզանդ, Մովսէս Խորենացի, Յովհան Մանգաղունի), ապա նաեւ՝ միջնադարեան հետագայ բազում հեղինակների գործերում: Ըստ այդ աղբիւրների՝ գուսանը, ընդհանրական-հաւաքական առումով, վաղնջական ժամանակներից մինչեւ ուշ միջնադար, հայ իրականութեան մէջ հանդէս եկած երգիչ-կատարող է, նուագածու, ասմունքող (ասացող), կատակերգու-դերասան, վիպական, ծիսական, ողբական (լալեաց), ներբողական, խրատական, երգիծական, վայելքի, սիրոյ եւ այլ բնոյթի երգերի հեղինակ, երաժշտական տարբեր գործիքների նուագակցութեամբ ինքնահնար կամ աւանդական երգերի կատարող-տարածող²:

Գուսաններն առաւելապէս ելել են արհեստաւորական շրջանակներից, հանդէս են ելել ամենատարբեր միջավայրերում՝ գիւղական, քաղաքային, պալատական, մասնակցել են տարբերոյթ հաւաքոյթների, զանգուածային հաւաքների, արտայայտուել ժամանակի խօսակցական լեզուով եւ սիրուած մեղեդիներով ու ձայնեղանակներով, անկաշկանդօրէն արծարծել ժողովրդին սրտամօտ զաղափարներ ու զգացումներ, իրենց արուեստով մրցակցել միմեանց հետ: Ըստ այսմ, իր որակական յատկանիշներով հայ գուսանը տիպաբանօրէն համարժէք է հին յունական ուսուցիչին (մասամբ՝ միմոսին), կելտական ցեղերի բարդին, գերմանական մայսերգիներին, պրովանսալական տրուբադուրին...

Լինելով ժողովրդական բանահիւսական տարբերքի գործուն կրողները, գուսաններն են հեթանոսական ժամանակների նուագակցութեամբ ինքնահնար կամ աւանդական երգերի կատարող-տարածող²:

Լինելով ժողովրդական բանահիւսական տարբերքի գործուն կրողները, գուսաններն են հեթանոսական ժամանակների նուագակցութեամբ ինքնահնար կամ աւանդական երգերի կատարող-տարածող²:

² Գուսանների վերաբերեալ մանրամասն տե՛ս Մանուկ Աբեղեանի «Հին գուսանական ժողովրդական երգեր» ուսումնասիրութիւնը (Մ. Աբեղեան, Երկեր, հտ. Բ, Երեւան, 1967, էջ 11-280):

¹ Տե՛ս Հ. Աճառեան, Հայերէն արմատական բառարան, հտ. Ա, Երեւան, 1971, էջ 597-598:



671-2019

րում յորինել ու տարածել մեր առասպելական ու վիպական երգերն ու դիւցազնավեպերը, որոնք նրանց միջոցով յարատեւել են քրիստոնէական դարաշրջանում: Մովսէս Խորենացին անձամբ լսել ու գրի է առել իր ժամանակի վիպասան-գուսանների պատմածները, ինչի շնորհիւ մեզ յայտնի են դարձել Հեթանոսական շրջանի մեր առասպելական ու վիպական երգերի մի շարք թանկագին բեկորներ: Մեր հին էպոսը՝ «Հայկ եւ Բելը» եւ այլ հերոսական վեպեր, ՊատմաՆոր վկայութեամբ, պահպանուել են «ի գուսանականէն»³:

Շարունակելով Հնագոյն Հեթանոսական շրջանի գուսանների աւանդոյթները, միջնադարեան գուսանները ոչ միայն սերնդէ սերունդ վերածելով տարածել են նախկին երգերը, այլեւ ժողովրդական աւանդութիւնների հիման վրայ յորինել են նորերը: Այդպէս ծնունդ են առել «Պարսից պատերազմ», «Տարօնի պատերազմ» վիպերգերը, «Սասնայ ծռեր» էպոսի պատումները եւ այլ աւանդավեպեր՝ հիմնուած պատմական նոր իրողութիւնների վրայ: Այսպէս, Սեբէոսի վկայութեամբ, Մամիկոնեան տոհմի ծննդաբանութեան վերաբերեալ պատմել են նաեւ «գուսանք եւ ի մերում աշխարհին»⁴:

Միջնադարեան գուսանների շնորհիւ ծնունդ են առել նաեւ բազում այլ բնոյթի ժողովրդական երգեր, այդ թւում նաեւ՝ մեր անգուգական հայրենները, որոնք, Մ. Աբեղեանի ճշգրիտ բնութագրմամբ, ծագումնաբանօրէն ժողովրդա-գուսանական երգեր են: Հայրենների եւ ժողովրդա-գուսանական այլ երգերի զգալի մասը, ստեղծուած լինելով ուրախ հաւաքոյթների, խնջոյքների համար, անկաշկանդօրէն արտայայտել է խրախճանքի եւ զգացական սիրոյ տրամադրութիւններ, ուստի մերժուել է Եկեղե-

ցու կողմից՝ համարուելով «դիւական», իսկ գուսանները՝ «պիղծ», «վաւաշ» եւ «բանակք դիւաց»⁵:

Ներսէս Ծնորհալին իր «Թուղթ ընդ-Հանրական»-ում վկայել է ԺԲ. դարում գուսանական երգերի լայն տարածման մասին եւ, որպէս կաթողիկոս, արգելել է հարսանիքներին ու կնունքներին Հնչեցնել այդ «դիւական» երգերը եւ խառնել դրանք «ընդ աստուածային երգոցն»⁶: Հայ իրականութեան մէջ գուսանական երգերի լայն տարածուածութեան վերաբերեալ վկայել են նաեւ յաջորդ դարերի մի շարք հեղինակներ: Այսպէս, իր «Խրատ հասարակաց քրիստոնէից» կանոնադրական-խրատական երկում Յովհաննէս Պլուզ Երզնկացին ասել է, թէ չպէտք է թոյլ տալ, որ մանուկների մտքերը ճապաղուեն՝ լսելով «ձայն եւ երգ գուսանաց»: Ապա աւելացրել է. «Ի կնունք եւ ի պսակն ոչ է պարտ արբենալ կամ գուսան կոչել կամ բող, զի դիւաց կոչողքն են գուսանքն»: Երզնկացու վկայութեամբ, նոյնիսկ որոշ քահանաներ ու սարկաւազներ Երզնկայում, ի թիւս այլ արատների, տարուել են նաեւ գուսանական երգերով⁷:

Այս ամէնով հանդերձ, յատկապէս կեանքի աստիճանական աշխարհիկացմանը համընթաց, ժողովրդի մտքի ու սրտի արգասիք գուսանական պարզ ու անկաշկանդ երգն աւելի ու աւելի ծաւալուել է եւ ներազդել գրաւոր-անհատական քերթութեան, այդ թւում նաեւ՝ նոյն Ծնորհալու եւ Երզնկացու ստեղծագործութեան վրայ: Անգամ նրանցից առաջ հանճարեղ Նարեկացին իր որոշ տաղեր գրել է ժողովրդագուսանական հայրենների չափով ու ոգով,

5 «Մատենագիրք Հայոց», հտ. Ա, Ամբիփխաւ-Լիբանան, 2003, էջ 1230:
 6 Ներսէս Ծնորհալի, Թուղթ ընդհանրական, Վեմետիկ, 1890, էջ 62:
 7 Տե՛ս է. Մ. Բաղդասարեան, Յովհաննէս Երզնկացին եւ նրա խրատական արձակք, Երեւան, 1977, էջ 177-178, 194-195:

3 Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 48:
 4 Սեբէոս, Պատմութիւն, Երեւան, 2005, էջ 24:

իսկ «Մատեան Ողբերգութեան» երգի մի ողջ դրուագ հիւսել է ժողովրդական լալեաց երգերի հետեւութեամբ:

Հայաստանի համար ծանրագոյն ու ճակատագրական-բեկումնային այն ժամանակաշրջանում, երբ սելջուկ թուրքերն աւերեցին երկիրը, եւ վերացաւ Բագրատունեաց պետութիւնը, երբ պետականօրէն Հնագոյն քրիստոնեայ ժողովուրդը յայտնուեց մահմեդական այլազան ցեղերի տեւական բռնատիրութեան ներքոյ, հայութիւնն սկսեց աստիճանաբար, այսպէս ասած, արեւելացուել՝ պահպանելով հանդերձ իր ազգային ինքնութիւնն ու քրիստոնէական-արեւմտեան մշակութաբանական տիպը:

Նշուած պայմաններում, ահա, Հայ ժողովրդական երգիչ-գուսանների մի մասը սկսեց ստեղծագործել նաեւ պարսկերէն, ապա առաւելապէս թիւրքերէնի այս կամ այն խօսուածքով: Փոքր Ասիայի օղուցօսմանական միջավայրում հանդէս եկած Հայ գուսանը, արեւելացուելով ու ապագայնացուելով, կոչուեց ուզան (օզան): Արեւելագէտ, թուրքագէտ Վլադիմիր Գորդելեւսկին համոզիչ կերպով ապացուցել է օղուգական ուզան բառի ծագումը հին հայկական գուսան-ից: «Գուսան»-«ուզան» բառը, — գրում է նա, — պրոֆեսիոնալ երգիչ նշանակութեամբ, հետագայում հայերի եւ օսմանցիների մօտ տեղի է տուել արաբական «աշըղ» բառին»⁸: Ուզան բառի վերափոխումն աշուղ-ով պատահական չի եղել: Թուրքական բանաստեղծութիւնը, խորապէս կրելով պարսկական սուֆիական բանաստեղծութեան, յատկապէս՝ նրա խոշոր ներկայացուցիչ Ջալալէդդին Ռումիի ազդեցութիւնը, վերածուել էր հիմնականում սուֆիական-միստիկական բանաստեղծութեան, որ կոչուեց աշուղութիւն: Աշուղ բառը, որ արաբական ծագումով սուֆիական եզրոյթ է, նշանակում է սիրա-

նար, աստուածային սիրով վառուող եւ միստիկ դերվիշի երկրորդ աստիճանն էր⁹:

Այսպիսով, հայ բանահիւսակաւ աւանդոյթները ժառանգած ժողովրդական երգիչ-գուսաններից շատերը, որ պարսիկ ու արաբ դերվիշների եւ առհասարակ պարսկա-արաբական սուֆիական բանաստեղծութեան ազդեցութեամբ, բազմազգ հանրութեան մէջ երգ-երաժշտութեամբ տարածում էին կրօնական երգեր եւ արեւելեան ժողովուրդների լեզուներն ու աւանդութիւնները, վերափոխուեցին թէ՛ զաղափարաբանօրէն եւ թէ՛ անուանապէս: Ըստ այդմ, հայ գուսանը մուսուլմանական աշխարհում վերածուեց պարսկալեզու, ապա առաւելապէս թուրքալեզու միստիկ սիրահար-աշուղի:

Ինչպէս գրում է Գեւորգ Ախվերդեանը. «Պարսից ու թուրքաց մէջ աշուղներու մեծ մասն էլել են ազգով հայ, շատն էլ հենց թուրքերէն են խաղ ասել. եւ անկարելի է, որ սրանք չըլին՝ մուծել պարսից մէջ՝ իրանցմէն հնարած եղանակներն ու ձեւերն»¹⁰: Ուսումնասիրողներից մէկ ուրիշը՝ Լեւոն Մեսրոպը, առաւել հաստատուն հիմքերի վրայ, գրել է. «Հայ աշուղներէն շատերը թուրքերէն, պարսկերէն ու քիւրտերէն տաղեր գրած են: Նոյնիսկ թուրքերուն եւ քիւրտերուն բազմաթիւ նշանաւոր տաղերգուները (սագ հահիրի) հայեր եղած են: Անտարակոյս, ասոնք իրենց ազգային խառնուածքէն, հոգիէն եւ քրիստոնէական ըմբռնումներէն շատ բան ներմուծած են իսլամական տաղերգութեան մէջ»¹¹: Այսինքն՝ տեղի է ունեցել մի կողմից արեւելեան աշուղութեան ներթափանցում հայ իրականութեան մէջ, միւս

9 Տե՛ս նոյն տեղում, էջ 30, նաեւ նոյն ուսումնասիրութեան I հատորի (Մոսկվա, 1960) էջ 206: Տե՛ս նաեւ В. Б. Куделин, Поэзия Юнуса Эмре, М., 1980, стр. 139:
 10 Սայեաթ-Նօվա, լուս գրած աշխատասիրութեանով Գեորգեայ Ախվերդեան, Մոսկվա, 1852, էջ Ժ:
 11 Լ. Մեսրոպ, Պատասխան թուրք պատմաբաններուն, «Աշխարհ», Փարիզ, 1961, թիւ 60:

կողմից՝ հայ գուսանութեան ներթափանցում արեւելեան աշխարհ, ինչի արդիւնքում կատարուել է հայկական-քրիստոնէական եւ պարսկա-թուրքական-մուսուլմանական մշակոյթների որոշ խաչասերում: Եւ եթէ դրանից շահել են աղքատիկ մշակոյթ (մեղմ ասած) ստեղծած թիւրքական ցեղերը, ապա հայ մշակոյթը դրանից աւելի շատ աղարտուել է...

Անհրաժեշտ է նկատել նաեւ հետեւեալը: Թուրքերէն արտայայտուող հայազգի աշուղները ստեղծագործել են ինչպէս թուրք, այնպէս էլ հանգամանքների բերումով թուրքախօս դարձած հայ հանրութեան համար: Ինչպէս գրում է Գորդլեւսկին, «Կրկնակի կամ աւելի ճիշտ՝ երկակի տրամադրութեան արտայայտիչ էին ժողովրդական երգիչ-աշուղները, որոնք թափառում էին Փոքր Ասիայում, նրանց երգացանկում կային երգեր ե՛ւ քրիստոնեաների ե՛ւ մուսուլմանների համար»¹²: Սա էլ, ըստ Գորդլեւսկու, վկայութիւն էր փոքրասիական աշուղների ոչ թուրքական կամ հայկական ծագման մասին:

Հայ գուսան-օգաններից սերուել են թուրքական ծագումով աշուղները, որոնք իւրացրել են մի կողմից՝ հայկական, միւս կողմից՝ պարսկա-արաբական երգ-երաժշտութեան աւանդոյթները¹³: Այդ հիմքի

վրայ, ահա, ստեղծուել է թիւրքական ցեղերի երաժշտա-բանաստեղծական արուեստը, որը հիմնականում ունեցել է աշուղական դրսեւորում:

Աշուղութիւնը հայ իրականութիւն է թափանցել արդէն ժ.Գ. դարում, երբ լայն թափ էր առել կեանքի ու մշակոյթի աշխարհիկացումը եւ մեծացել էր յատկապէս պարսկական ազդեցութիւնը հայկական կենցաղի ու մշակութային տարբեր բնագաւառների վրայ: Առեւտրական եւ արհեստագործական խոշոր կենտրոններ հանդիսացող որոշ հայաքաղաքներում աշուղութիւնը տարածուել է սուֆի դերվիշ-աշուղների միջոցով: Նման ներթափանցման համար պարարտ հող է եղել յատկապէս վաճառաշահ Երզնկայում: Այդ քաղաքում ծնուած ու կայացած խոշոր բանաստեղծներից մէկի՝ Կոստանդին Երզնկացու ստեղծագործութիւնը բաւականին ուշագրաւ վկայութիւններ է պարունակում հայ իրականութեան մէջ արեւելեան երաժշտա-բանաստեղծական արուեստի թափանցման վերաբերեալ: Իր մի բանքի խորագրում Կոստանդինն ասել է. «Այր մի նստել կայր ու Շահնամայ ասէր ձայնով»: Այդ «այրը» եղել է կամ պարսիկ երգիչ-աշուղ, կամ պարսկերէն իմացող եւ Շահնամէն իւրացրած հայ գուսան: Ասենք, որ, Շահնամէից բացի, հայկական շրջաններում այդ ժամանակ երգուելով-պատմուելով տարածուել են նաեւ արեւելեան այլ հերոսական ու սիրային աւանդավէպեր (Վարդի եւ Սոխակի, Շամի եւ Փարվանայի, Լէյլիի եւ Մեջնունի, Ճահրադի եւ Շիրինի եւ այլն), որոնց արձագանքները կան մեր աշխարհիկ բանաստեղծութեան մէջ:

Յայտնի է նաեւ, որ Կոստանդին Երզնկացին սուֆիական աշուղական բանաստեղծութեան ազդեցութեամբ է գրել իր «է սուրաթ պայժառ» սկսուածքով խորհրդաբանական-այլաբանական բան-

12 В. А. Гордлевский, *Избранные сочинения*, т. III, с. 44.
 13 Լ. Մետրուք վերջ յիշուած յօդուածում տեղեկացրել է, որ թուրք բանաստեղծ Իւսուֆ Նաբիին ժամանակակից են եղել հայազգի թուրքագիր աշուղներ Մեսիհի Էրմենին եւ կարնեցի Հաքքի-Մովսէլը: Ի դէպ, յօդուածում նշուած է, որ այդ աշուղներն ապրել են ժ. դարում: Դա բացայայտ տպագրական վրիպակ է, պետք է լինէր ժ.Է. դար, քանի որ Իւսուֆ Նաբին ապրել է այդ դարում (ծնուել է 1642-ին): Չնկատելով այդ վրիպակը, Օստիո Գրիգորեանն իր «Հայ թիւ գուսանական երգերը» գրքում (Երեւան, 1971, էջ 229) Մեսիհի Էրմենինն համարել է ժ. դարի աշուղ՝ հաշուի չառնելով, որ այդ դարում չկար ո՛չ աշուղութիւն, ո՛չ էլ առհասարակ թուրքերէն գրականութիւն:

քը¹⁴: Իր բանքերում նա պատկերել է նաեւ արդէն արեւելացող-պարսկացող մեջլիս-մեճլիս-խնջոյքները՝ իրենց սաղի-մատուռակներով, մտրուպ-նուագածուներով, որ նուագում են շաշթա-վեցալար նուագարաններ, երգի, նուագի եւ պարի համար բացում են մէլիս-մոլտան-հրապարակներ: Ինչպէս նկատել է Մ. Աբեղեանը, «գուսան» բառի տեղ անցնում է մի նոր օտար բառ՝ «մտրուպ»¹⁵: «Գուսանին» սկսում է փոխարինել նաեւ «աշուղը» («աշրխ», «աշըղ»): Կոստանդինի ժամանակ արդէն մասամբ սկսուել էր այդ երեւոյթը: Իր սիրերգերից մէկում նա, դիմելով սիրած էակին, ասել է. «Ձի գիտե՞ս՝ քո աշըխ եմ ես»¹⁶:

Ժողովրդական երգիչ-նուագածուին դարերի վեր մեզանում տրուած «գուսան» անուանումը ժ.Գ. դարում եւ աւելի ուշ դեռեւս կենսունակ էր եւ աւելի կիրառելի՝ ժողովրդի ու գրականութեան մէջ: Այդ դարի մէկ այլ նշանաւոր երզնկացի հեղինակ՝ Յովհաննէս Պլուզը, բազմիցս յիշել է իր ժամանակի գուսաններին: Նրանց յիշատակել են նաեւ ժ.Գ. դարի որոշ մատենագիրներ¹⁷:

Ժ.Գ. դարում, ուրեմն, Երզնկայում եւ այլ խոշոր հայաքաղաքներում եղել են օտարազգի դերվիշ-աշուղներ, եւ «գուսան» բառին, «մտրուպից» գատ, մասամբ սկսել է փոխարինել «աշուղ» բառը: Այդ ժամանակ էլ, ըստ երեւոյթին, հայ գուսանը սկսել է մասնակիորէն աշուղանալ՝ ստեղծագործելով նաեւ պարսկերէն ու թուրքերէն:

Աշուղութիւնը, հայ իրականութիւն թափանցելով ժ.Գ. դարում եւ աստիճանաբար ծա-

լալուելով՝ կայացել է ժ.Գ. հարիւրամեակում¹⁸: Ըստ այդմ, հայ ժողովրդական երգիչ-գուսանը իր դիրքերը զիջել է աշուղին՝ ոչ միայն փոխուելով անուանապէս, այլեւ իւրացնելով նրա արուեստը: Հայ ազգային բանահիւսական մշակոյթի կրող գուսանները, որ ստեղծել ու տարածել էին Գողթան երգերից ու հնագոյն վիպերգերից սկսած մինչեւ անզուգական հայրենները, վերածուելով աշուղների, նախապէս եւ երկար ժամանակ եղել են հայ երաժշտա-բանաստեղծական արուեստում «արեւելեան դժի հաղորդողներ», այն է՝ արեւելեան ժողովրդական ու ինքնաստեղծ վիպական ու քնարական երգերի եւ ըստ այդմ, արեւելեան ոճի ու ճաշակի տարածողներ: Դա իր որոշ ազդեցութիւնն է ունեցել նաեւ ժամանակի հայ անհատական բանաստեղծութեան, յատկապէս՝ աշխարհիկ տաղերգութեան վրայ:

Լինելով երաժշտաբանաստեղծական դարաւոր ու հարուստ աւանդոյթներ ունեցող ժողովրդի ներկայացուցիչներ՝ գուսանները, որ արդէն հանդէս են եկել օտարամուտ աշուղական «տարագով», իրենց հերթին մեծապէս նպաստել են աշուղական բանարուեստի ճոխացմանը՝ ստեղծելով այդ արուեստի լաւագոյն նմուշները: Ըստ այսմ, հայ գուսանն իր որոշակի աւանդ ունի թե՛ աշուղութեան կազմաւորման եւ թե՛ նրա ճեւղաձայն գարգացման գործում:

Անհրաժեշտ է նշել, որ հայ իրականութեան մէջ աշուղութեան թափանցումը մից յետոյ էլ արեւելացած գուսան-աշուղների կողքին կամ նրանցից գատ դեռ երկար ժամանակ գործել են նաեւ սոսկ հայազգի եւ ազգային աւանդոյթներով ստեղծագործող գուսաններ: Այնուհետեւ աշուղացած հայ գուսաններն աստիճանաբար անցել են բացառապէս կամ հիմնական-

14 Տե՛ս Կոստանդին Երզնկացի, *Տաղեր*, աշխատասիրութեամբ Արմենուհի Սրապեանի, Երեւան, 1962, էջ 166-168:
 15 Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. Բ, էջ 201-202:
 16 Կոստանդին Երզնկացի, *Տաղեր*, էջ 160:
 17 Տե՛ս Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. Բ, էջ 199-200:

18 Աշուղութեան եւ աշուղական արուեստի մասին տե՛ս Գարեգին Լեւոնեանի ուսումնասիրութիւնները (*Երկեր*, Երեւան, 1963, էջ 19-283):

նում թուրքերէնի: Յայտնի են ուշ միջնադարում հանդէս եկած հարիւրաւոր թուրքագիր աշուղներ¹⁹: Նրանց երգերը, սակայն, ինչպէս հայատառ թուրքերէն մեծածաւալ գրականութիւնը, կազմում են հայ մշակոյթի մի ինքնօրինակ մասը...

Ինչպէս գրում է Նիկողոս Թահմիզեանը, գուսանութեան արեւելացման շրջանում «հայ գուսաններն, իրենց աշխատանքի բերումով, սերտ շփման մէջ են գտնուել մահադական շրջապատի հետ եւ ձգտել են հարաբերակցել հայոց ձայնեղանակները՝ ութ-ձայն եւ երկու ստեղի կոչուող համակարգը, պարսկա-արաբական 12 մուղամների գրութեան հետ... Ժողովրդական հոծ զանգուածներին դիմելու համար հայ գուսաններն իրենց արուեստով, բնականաբար, պետք է տիրապետէին թուրքերէն լեզուին: Էլ չենք խօսում այն մասին, որ նրանք շատ դէպքերում ստիպուած են եղել ծառայել օտար իշխանաւորներին: Վերջիններս ձգտելով իսպառ վերացնել տաղանդաւոր գուսանների կապերը հայութեան ու քրիստոնէութեան հետ, կանգ չեն առել ամենադժան միջոցների առջեւ»²⁰: Դա թուրքական քաղաքական-մշակութային էքսպանսիայի դրսեւորում էր, որ կործանարար կարող էր լինել հայ մշակոյթի համար, եթէ չառաջանար հա-

կադարձ շարժումը, ինչի շնորհիւ հայ աշուղներն աստիճանաբար վերադարձել են ազգային լեզուին...

ԺԳ.-ԺԴ. դարերից մեզ ոչ մի հայ գուսան-աշուղ անուանապէս յայտնի չէ: Վկայուած է միայն ԺԵ. դարի գուսաններից մէկի անունը: Դա 1438-ին նահատակուած Յովհաննէս Մանուկ Խլաթեցին է, որը եղել է Խլաթի Սեֆեդին ամիրայի պալատական երգիչը՝ «սնեալ եւ վարժեալ ի յարուեստս երաժշտական գուսանական երգոց»²¹: Յաւելով, մեզ չեն հասել Յովհաննէս Մանուկի հեղինակած գուսանական երգերը: Յայտնի է միայն, որ նա օգտագործել է հայ հոգեւոր երգ-երաժշտութիւնը եւ հիւսել է նաեւ «ողբս լալազինս»: Նա թերեւս եղել է մեր առաջին գուսան-աշուղներից. անտարակոյս գրել է նաեւ թուրքերէն եւ այդ լեզուով, ինչպէս յայտնի է, ելել է հրապարակային մրցակցութեան:

Աշուղութիւնն աննախադեպ զարգացում է ապրել ԺԶ. դարում Սեֆեան Պարսկաստանի տարածքներում, որոնց մէջ էր ընդգրկուած նաեւ Հայաստանի մեծ մասը: Սեֆեան հարստութեան հիմնադիր Շահ-Իսմայիլը (1487-1524) սուֆի շէյխ էր՝ հոգեւոր առաջնորդ. եղել է թուրքալեզու բանաստեղծ՝ Խաթայի անունով, հովանաւորել է աշուղներին, կազմակերպել աշուղական մեջլիս-հաւաքոյթներ՝ բաւ-մրցոյթներով, եւ դարձել սուֆի-աշուղների կուռքն ու աստուածը (Շահ-Խաթայի, Շախաթայի)²²: Այս ժամանակ աշուղութեան լեզուն դարձել է հիմնականում թուրքերէնը: Կազմաւորուել է աշուղական բարդ ու ինքնօրինակ բանարուեստը, որն ընդգրկում է բազում ու

21 Հայոց նոր վկաները (1155-1843), աշխատութեամբ Յ. Մանանդեանի եւ Լ. Աճառեանի, Վարդապատ, 1903, էջ 283:
22 Տե՛ս մեր Սայեսթ-Նովայի բանաստեղծական ժառանգութիւնը աշխատութիւնը (Երեւան, 2016), էջ 206:

19 Վրաստանի կենտրոնական պատմական արխիւում պահպանուած է «Թուրքերէն ասող հայ աշուղներ» վերստուգեամբ մի ձեռագիր, որտեղ տրուած են մինչեւ ԺԹ. դարը ներառելի 90-ի չափ հայ աշուղների համառօտ կենսագրութիւնները եւ մուշներ արանց թուրքերէն երգերից (տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ, Յուցակ հայերէն ձեռագրաց Վրաստանի կենտրոնական պատմական արխիւի, «Բանբեր Մատենադարանի», հտ. 4, 1958, էջ 416-419): Տե՛ս նաեւ Խ. Ամիրեան, Թուրքալեզու հայ աշուղներ. Օսմանեան կայսրութիւն. 16-20-րդ դարեր, Փարիզ, 1993: Ծուրջ 500 թուրքագիր հայ աշուղների ինքնութիւնը քննել է Գ. Բամպուքեանը (տե՛ս Լ. Ստեփանեան, Գետրոգ Բամպուքեան. կեանքը, գործը եւ ժամանակը (1923-1996), Երեւան, 2018, էջ 37):
20 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. IV, Երեւան, 1972, էջ 570:

բազմապիսի երգատեսակներ՝ դիւանի, դազալի, թեջնիս, թաւալիք, դաստան, դուբէյթ, դարահեշա, մուխամմազ, մուսադաս, դափիա եւ այլն, եւ այլն:

Աշուղութիւնը, բնականաբար, մեր իրականութեան մէջ աւելի է տարածուել ԺԶ. դարում: Նշենք, որ այդ ժամանակի խոշորագոյն բանաստեղծ Գրիգորիս Աղթամարցին եւս գործածել է աշուղ (աշուղ) բառը՝ սիրահար երգիչ, գովերգու իմաստով²³ եւ նա եւս ինչ-որ չափով կրել է աշուղութեան ազդեցութիւնը: Դրա հետեւանքն է նաեւ նրա ստեղծագործութեան մէջ արեւելեան բանաստեղծութեանը յատուկ «խայտաբղետ-մոլամա» կոչուած ձեւի թափանցումը²⁴, ինչն, անշուշտ, կատարուել է աշուղական արուեստի ներգործութեամբ:

Յայտնի է, որ աշուղական արուեստին բնորոշ էր երկլեզու եւ քառալեզու երգերի աւանդոյթը, ինչը իւրացրել են նաեւ ԺԶ. դարի մեր որոշ գուսաններ եւ տաղասացներ²⁵: Այդ դարում գրուած մի անանուն սիրերգում²⁶ հեղինակը պատմել է մի «զարեպ կտրիճի» մասին, որը «եկեր, մէկ զալումի աշուղ եղեր է»: Աշուղ-աշուղը այստեղ կարելի է հասկանալ նաեւ իր նախնական՝ սիրահար իմաստով, սակայն, ինչպէս վկայում է անանուն հեղինակը, այդ սիրահար երիտասարդը երգեր «ասող էր ու գրող», այսինքն՝ իսկապէս աշուղ է եղել: Ընդ որում, նա ծանօթ է եղել թէ՛ թղկուրանցու տաղերին եւ թէ՛ աշուղների աս-

տուած Շահ-Իսմայիլ Խաթայի խաղերին (աշուղական երգեր)։

Նա կատար, թէ՛ գիտեմ, եւ ես չաւտայի, տաղեր Թուրկուրանցի, խաղեր Խաթայի:

ԺԶ. դարից արդէն որոշ գուսաններ եւ աշուղներ սկսել են հանդէս գալ անուանապէս, ինչը նշանակում էր ժողովրդական երգիչների ստեղծագործութեան աստիճանական անհատականացում-գրականացում: Այս երեւոյթն աշուղութեան պայարկէզում նկատել է Վ. Բրիւսովը՝ գրելով. «Մշակուեց աշուղ բանաստեղծի՝ ժողովրդական երգչի նոր տիպը, որ թանկ է գնահատուած իր ոգեշնչումները եւ ուզում է դրանք պահպանել: Դրանից բացի, այդպիսի աշուղը (իր հարկէ որոշ չափով) դառնում է գրքի մարդ, այսինքն՝ անցեալի պոեզիային ծանօթ... Այսպէս հետեւողականօրէն, երգիչների անձնական աճի եւ ժողովրդի կուլտուրական աճման ազդեցութեամբ ստեղծուեց բանաստեղծ աշուղի տիպը, որը միջնադարեան հայ քնարերգութեան աւանդոյթները տարաւ նոր ուղիներով»²⁷:

Այստեղ իսկ նկատենք, որ աշուղութիւնը (նոյնն է, թէ՛ ժողովրդագուսանական երգը) որքան էլ անհատականացել-գրականացել է, այդուհանդերձ, այն գուտ գրական երեւոյթ չէ եւ մասամբ է պատկանում գրականութեանը՝ մասամբ մնալով ժողովրդական բանահիւսութեան ոլորտում: Միակ բացառութիւնն է աշուղ Սայեսթ-Նովան, որը, նոյն Բրիւսովի բնորոշմամբ, «իր հանճարի

23 Տե՛ս Գրիգորիս Աղթամարցի, XVI դ., ուսումնասիրութիւն, քննական բնագրեր եւ ծանօթագրութիւններ Մայիս Աղալբեգեանի, Երեւան, 1963, էջ 133:
24 Տե՛ս Ա. Կոզմոյեան, Հայոց եւ պարսից միջնադարեան քնարերգութեան համեմատական պոետիկան, Երեւան, 1997, էջ 143-144:
25 Տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.), աշխատասիրութեամբ Հասմիկ Սահակեանի, հտ. I, Երեւան, 1986, էջ 126-128, 177-178:
26 Տե՛ս նոյն տեղում, էջ 346:

27 Վ. Բրիւսով, Հայաստանի եւ հայ կուլտուրայի մասին, Երեւան, 1967, էջ 97: Այս երեւոյթը Բրիւսովը սկսած է համարել ԺԶ. դարից, մինչդեռ այն սկսուել էր ԺԶ. դարից: Ընդ որում, Բրիւսովը «նոր տիպի առաջին աշուղներից» է համարել Ստեփանոսին, որն ըստ նրա՝ ԺԷ. դարի երգիչ է: Վերջինիս մի երգը՝ իր թարգմանութեամբ, գետեղել «Հայաստանի պոեզիան» հատորում (էջ 245-246): Խօսքը խել Ստեփանոսի մասին է, որն ապրել է ԺԶ. դարում եւ թերեւս եղել է գուսան, գուցէ եւ՝ աշուղ (տե՛ս Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը, հտ. I, էջ 299-301, 692):

զօրութեամբ ժողովրդական երգչի արհեստը վերածեց բանաստեղծի վեհ կոչման»²⁸:

Ճիշտ է նկատել Մեսրոպ Ճանաչեանը, որ աշուղական երգը հայ բանահիւսութեան շարունակութիւնն է՝ «ծաղկած հայրենի հողի վրայ եւ կամ անոր մօտ ապրող հայկական գաղութներու մէջ: Ան կու տայ մեզի բնիկ հայեցի ժողովրդական ապրումները, սիրոյ եւ տառապանքի երգը, եւ այդ տեսակէտով արեւելահայոց մէջ մանաւանդ՝ հայադրոշմ բանաստեղծական սեռին մշակման մեծապէս նպաստած է, ըլլալով ծնունդը հայ ժողովրդական հոգեբանութեան՝ իր տոհմային գոյնով եւ բնոյթով»: Ինչ վերաբերում է հայ աշուղական երգի մէջ առկայ օտար ազդեցութեանը, ապա այն, Ճանաչեանի իրաւացի բնորոշմամբ, «մնացած է զուտ արտաքին պայմաններու մէջ եւ թափանցած չէ հայ երգի ոգւոյն ու գաղափարներուն: Սիրային երգերն ալ կը կրեն միշտ քրիստոնեայ ժողովրդի մը մաքուր կենցաղին օժովութիւնը եւ ազնուական բարձրութիւնը»²⁹:

Այս ամէնով հանդերձ, աշուղական երգը, որպէս «բանահիւսութեան շարունակութիւն», ներկայացնում է ժամանակի գրականութեան, այսպէս ասած, եզրային (պերիֆերիկ) շերտը, որքան էլ այն խոր ազդեցութիւն է գործել ժամանակի բանաստեղծների վրայ...

Վերադառնալով ժ.Ձ. դարին, նշենք, որ այդ դարից արդէն անուանապէս յայտնի են որոշ աշուղներ: Նրանցից է Նազար Բասենցին, որն իր տաղերից մէկում իրեն աշուղ է կոչել. «Խօշէվան է՞ր գովէր աշուղն Նազարն ու Բասենցին»³⁰: Մեր կարծիքով՝ Նազար Բասենցին է «Երկու բլրու բաղին միջումն խօսէին» սկսուածքով երգի հեղինակ Նազարը, որ համարուել է

28 Նոյն տեղում, էջ 98:
29 Մ. Ծանաչեան, Պատմութիւն արդի հայ գրականութեան, հտ. I, Վեներիկ, 1953, էջ 119-120:
30 Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը, հտ. I, էջ 86 (տարբերակ՝ աշխ.):

ժ.Է. դարի տաղասաց³¹: Երգն աւարտուում է հետեւեալ երկտողով.

Քո հասրաթէդ ծառայ աշըղ Նազարին,
Նազարին
արտասուցիմն հա՛մ ջուր եղել, հա՛մ արին,
հա՛մ արին:

Նազար Բասենցին, անշուշտ, գրել է նաեւ թուրքերէն աշուղական երգեր: Ըստ երեւոյթին, նա է թուրքայեզոյ հայ աշուղ Նազարը³²:

Անհրաժեշտ է նշել, որ ժ.Ձ. դարի այն ժողովրդական երգիչները, որոնք ստեղծագործում էին թէ՛ մայրենի լեզուով եւ թէ՛ թուրքերէն, միաժամանակ տաղասաց-գուսան էին եւ աշուղ: Նրանք աշուղ էին իրենց թուրքերէն երգերով եւ տաղասաց-գուսան էին հայերէն երգերով: Հետագայում է, որ աշուղների հայերէն երգերը եւս ենթարկուել են աշուղական բանարուեստին:

ժ.Ձ. դարի աշուղ է նաեւ Ղուլ-Օղլի (Օղլու) Երզնկացին³³: Գրել է թուրքերէն

31 Տե՛ս Գիտական միջոցի ժողովածու, թիւ 2, Երեւան, 1949, էջ 195-196 (մէքթերումն՝ այստեղից): Տե՛ս նաեւ Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI-XVII դդ.), աշխատասիրութեամբ Հասմիկ Սահակեանի, հտ. II, Երեւան, 1987, էջ 521-522, 762:
32 Տեւ Ս. Ամիրեան, Աշ. աշխ., էջ 156:
33 Ա. Մնացականեանը յայտնի չէ, թէ ինչի հիման վրայ, այս աշուղին համարել է ժ.Ձ. դարի «մոռացուած բանաստեղծներից» (տե՛ս Ա. Մնացականեան, Հայկական միջնադարեան ժողովրդական երգեր, Երեւան, 1956, էջ 557): Ղուլ-Օղլի Երզնկացուն փորձել են իրել ժ.Ձ. դարի հեղինակներէն Ս. Ամիրեանը եւ Օ. Գրիգորեանը (տե՛ս Ս. Ամիրեան, Աշ. աշխ., էջ 143-144, Օ. Գրիգորեան, Հայ աշուղական գրականութեան պատմութիւն, Երեւան, 2002, էջ 79-80): Օ. Գրիգորեանը յայտնել է այն կարծիքը, թէ Ղուլ-Օղլի Երզնկացին ապրել է ժ.Ձ. դարի երկրորդ կէսին. այս կարծիքին համամիտ է եղել Օ. Նազարեանը (տե՛ս Օ. Նազարեան, «Կոռնկ» երգը եւ նրա պատմութիւնը, Երեւան, 1977, էջ 79-80): Այս աշուղին առանձնակի անդրադարձել է Վ. Եղիազարեանը եւ ցոյց տուել, որ նա, իսկապէս, ժ.Ձ. դարի երկրորդ կէսի հեղինակ է (տե՛ս Վ. Եղիազարեան, Ղուլ-Օղլի Երզնկացի աշուղի

երգեր³⁴: Դրանցից մէկի ամբողջական բնագիրը եւ հայերէն թարգմանութիւնը հրատարակել է Խաչիկ Ամիրեանը³⁵: Ինչպէս գրում է նա, այդ երգն, անկասկած, «տաղաչափական կերտուածքով, լեզուաճական տարբերով եւ մշակած թեմայով տիպիկ աշուղական է»³⁶: Ղուլ-Օղլիի այդ աշուղական երգը կոռնկներին ուղղուած մի բաւականին սրտառուչ պանդխտութեան երգ է: Այս աշուղը ստեղծագործել է նաեւ հայերէն: Յայտնի է, որ նա ողբ է գրել Երզնկայի 1582 թուականի աւերիչ երկրաշարժի առթիւ³⁷:

ժ.Ձ. դարի ամենանշանաւոր գուսան-աշուղը Վանեցի Քուչակն է: Ճանաչուած է եղել նաեւ Վանլի Քուչակ, Նահապետ Քուչակ, Նահապետ վարպետ, Ղուլ Քուչակ մականուններով³⁸:

ժամանակի խնդիրը եւ ստեղծագործութիւնը. «Հայկազեան հայագիտական հանդէս», ԻԸ, Բէյրութ, 2018, էջ 237-251):
34 Ղուլ-Օղլու անունով թուրքագիր հայ աշուղի մի երգը հրատարակել է Յ. Քիրտեանը ժ.Է. դարի մի Տաղարանից (տե՛ս Յ. Քիրտեան, Թրքաբարբառ հայ տաղասացներ, «Աստղաբերդ» ամսագիր, թիւ 10, Ստամբուլ, 1952, էջ 198, Խ. Ամիրեան, Աշ. աշխ., էջ 142): Հասանաբար, սա նոյն Ղուլ-Օղլի Երզնկացին է:
35 Տե՛ս Ս. Ամիրեան, Աշ. աշխ., էջ 147: Այդ երգի ստաջիմ տունը եւ այդ տան հայերէն թարգմանութիւնը հրատարակել է Ա. Մնացականեանը (տե՛ս Ա. Մնացականեան, Աշ. աշխ., էջ 557-558): Երգի ստաջիմ երկու տները եւ դրանց թարգմանութիւնը (Օ. Եգանեանի կատարած) հրատարակել է Օ. Նազարեանը վերոյիշեալ աշխատութեան մէջ (էջ 79):
36 Տե՛ս Ս. Ամիրեան, Աշ. աշխ., էջ 145:
37 Տե՛ս «Հայկազեան հայագիտական հանդէս», ԻԸ, էջ 241-242:
38 Աղբիւրներում առկայ են այս անուն տարբեր գրութիւններ («Քօշէկ, Քուչաք եւ այլն, անգամ Քուչար, Չիչակ»): Քուչակը Վանլի Քուչակ անունաձեւով յիշատակուած է նաեւ Վրաստանի կենտրոնական պատմական արխիւում պահպանուող յիշեալ ձեռագրում, որպէս «թուրքերէն ասող հայ աշուղ»: Այստեղ բերուած է նրա հեղինակած թուրքերէն երգերից մէկը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», հտ. 4, Երեւան, 1958, էջ 419):

Իր ապրած ժամանակաշրջանում ու տարածաշրջանում Քուչակը չափազանց սիրուած ու մեծարուած է եղել ժողովրդի կողմից: Նրա շուրջ ստեղծուել են աւանդութիւններ, որոնց մէջ պատմուել է նաեւ նրա երգ-երաժշտութեան հրաշագործ յատկութիւնների մասին³⁹: Քուչակի անուամբ պահպանուել են երկու տասնեակից աւելի բանաստեղծական գործեր: Դրանց մի մասը հայերէն է, միւս մասը՝ թուրքերէն⁴⁰: Իր հայերէն ժառանգութեամբ Քուչակը գուսան-տաղասաց է, այն է՝ հայ բանաւոր ու գրաւոր բանաստեղծական աւանդոյթների կրող ու արծարծող: Մինչդեռ իր թուրքերէն երգերով աշուղ է: Այդ երգերը հիւսուած են աշուղական երգատեսակներով: Դրանցից մէկի խորագրում նշուած է՝ վարսաղ. մի երգատեսակ, որը շատ յաճախ են կիրառել աշուղները⁴¹: Մէկ այլ երգ կազմուած է աշուղական բայաթի-խաղիկներից, որոնք խորագրում համարուած են մանիներ: Յատկանշական է, որ այդ բայաթի-մանիներում աշուղը կիրառել է թեջնի-սային-բառախաղային յանգեր⁴²:

Քուչակի թուրքերէն երգերն ունեն տարբեր թեմատիկ-բովանդակային ընդգրկում (խոհախրատական, սիրային եւ այլն): Յատկանշելի է, որ այդ երգերը եւս հիմնականում հասցեագրուած են հայ (քրիստոնեայ) լսարանին: Այդ է ապացուցում քրիստոնէական սրբութիւնների նրա գովերգը: Քուչակեան թուրքերէն երգերը նախատեսուած են եղել աշուղական մեջլիս-հաւաքոյթների, մասամբ՝ բաւ-մրցակէ-

39 Տե՛ս Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, աշխատասիրութեամբ ակադեմիկոս Հրանտ Թամրազեանի, Երեւան, 2001, էջ 29-32:
40 Տե՛ս Նահապետ Քուչակ, Աշուղական երգեր, աշխատասիրութեամբ Վանո Եղիազարեանի, Երեւան, 2017:
41 Վարսաղի վերաբերեալ տե՛ս մեր Սայեաթ-Նովայի բանաստեղծական ժառանգութիւնը աշխատութիւնը, էջ 59:
42 Թեջնիսի վերաբերեալ տե՛ս մեր Աշուղական աշխատութիւնը, էջ 174:

ճերի ժամանակ երգելու համար: Մի աւանդութեան մէջ ներկայացուած է Հրապարակային մրցավէճի ժամանակ Քուչակի փայլուն յաղթանակը թուրք աշուղի նկատմամբ, ինչպէս նաեւ վերջինիս ուղղուած նրա թուրքերէն սրամիտ չափածոյ պատասխանները⁴³:

Աշուղներն, ըստ հաստատուած կարգի, ունեցել են իրենց վարպետները: Իր վարպետն է ունեցել նաեւ աշուղ Քուչակը եւ մի երգի մէջ յիշել է նրան՝ «ասաց խորիմաստ վարպետս»: Ինքը՝ Քուչակը եւս եղել է վարպետ-աշուղ, ուստի կոչուել է նաեւ Նահապետ վարպետ⁴⁴:

Այս ամէնն, ահա, վկայութիւնն է, այն բանի, որ ժ.Պ. դարում հայ իրականութեան մէջ աշուղութիւնն արդէն կայացած երեսուցէր էր, եւ Քուչակ վանեցին իր թուրքերէն գերով լիարժէք աշուղ էր:

Ժէ.-ԺԸ. դարերում հայ իրականութեան մէջ առաւել լայն տարածում է գտնուում աշուղութիւնը⁴⁵: Այն գրեթէ լիովին փոխարինում է գուսանութեանը. այսինքն՝ հայ ազգային գուսանները մեծ մասամբ հանդէս են գալիս արդէն իբրեւ արեւելցի աշուղներ, որոնք հիմնականում ստեղծագործում են թուրքերէն, աշուղական տարածուած երգատեսակներով ու մեղեդիներով:

43 Տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. Զ, կազմեց Նորայր եպիս. Պօղարեան, Երուսաղէմ, 1972, էջ 101: Հրապարակային մրցավէճերի աւանդոյթը, ինչպէս նշել ենք, եղել է նաեւ միջնադարեան գուսանական միջավայրում. գուսանները մրցակցել են թէ՛ միմեանց եւ թէ՛ այլազգի երգիչ-գուսագածուների հետ:
44 Այս կապակցութեամբ տե՛ս Մ. Արեղեան, Երկեր, հտ. Բ, էջ 18: Տե՛ս նաեւ մեր նշումը աշխատութեան էջ 165:
45 Հայ իրականութեան մէջ ժ.Պ. դարում հանդէս եկած աշուղների մասին վկայել է ժամանակի պատմիչ Զաքարիա Սարկաւազ Քանաքեղցին (տե՛ս Զաքարիա Սարկաւազ, Պատմութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 46):

Ինչպէս ժ.Պ., այնպէս էլ ժէ. դարում որոշ ժողովրդական երգիչներ ստեղծագործել են թէ՛ մայրենի լեզուով եւ թէ՛ թուրքերէն՝ իրենց հեղինակած հայերէն տաղերով տակաւին մնալով իբրեւ գուսան-տաղասաց, իսկ թուրքերէն երգերով՝ իբրեւ աշուղ: Այդպիսին էին այդ ժամանակ հանդէս եկած տաղասացներ Աւետիք Դաշտեցին, Օքսուզ Աւետիքը, Դրվնդկի Մանուկը եւ ուրիշներ: Սակայն ժէ.-ԺԸ. դարերում արդէն հանդէս են գալիս նաեւ որոշ աշուղներ, որոնք, թուրքերէնից բացի, այս կամ այն բարբառի հիմքի վրայ գրում են աշուղական բանարուեստով հիւսուած հայերէն երգեր, որոնք հիմնականում նշուում են խաղ եզրոյթով: Ըստ այդմ, սկզբնաւորում է հայերէն աշուղական բանաստեղծութիւնը:

Ժէ.-ԺԸ. դարերում յատկապէս քաղաքային միջավայրում կազմաւորում են աշուղների առանձին կանոնակարգուած ընկերակցութիւն-համընթացութիւններ, որոնցով պայմանաւորուած էին հայ աշուղական դպրոցները: Առաջին աշուղական դպրոցները կազմաւորում են Հայաստանի եւ գաղթօջախների առեւտրական-արհեստաւորական աշխոյժ կեանք ունեցած քաղաքներում:

Նշանաւոր էր յատկապէս Նոր Զուղայի կամ պարսկահայ աշուղական դպրոցը, որի հիմնադիրն է Ղուլ Էգազը (մօտ 1650-1734): Նրա անունով յայտնի են շուրջ մէկ տասնեակ խաղեր, որոնց մեծ մասն ունի սիրային բովանդակութիւն: «Իւրաքանչիւր շնորհալի աշուղ, — գրում է Ասատուր Մնացականեանը, — նաեւ բանաստեղծ է, եթէ առիթ է ունենում շեղուելու իւր բուն նշանաբանից՝ «աշուղ»ութիւնից: Այդ դէպքում աշուղութիւնից մնում է բանաստեղծութեան արտաքին կողմը, ձեւն ու տաղաչափութիւնը: Ղուլ Էգազն այդպիսի շեղումների ժամանակ էլ նոյնքան վարպետ

է, եթէ ոչ աւելի»⁴⁶: Այսուհանդերձ, նա, ընդհանուր առմամբ, մնացել է աշուղութեան սահմաններում՝ չթեւակոխելով բանաստեղծական բարձր ոլորտը:

Նոր Զուղայի աշուղական դպրոցի ակնառու ներկայացուցիչ է նաեւ Ղուլ Արզունի, որը գործել է ժէ. դարի երկրորդ եւ յաջորդ դարի առաջին կէսին: Երկար ժամանակ ապրել է Կարկաթայում եւ Բենգալիայում: Հեղինակել է բացառապէս խոհարարական երգեր, որոնց մէջ տխուր սրտով խորհրդածուում է, խրատում՝ մերկացնելով ժամանակի մարդու եւ հասարակութեան արատները:

Թէ՛ Ղուլ Էգազը եւ թէ՛ Ղուլ Արզունին ժամանակին մեծ համբաւ են ունեցել եւ բաւական նպաստել են աշուղական երգի հետագայ զարգացմանը:

Նոր Զուղայի դպրոցի թերեւս ամենաշնորհալի աշուղն է Բաղեր-Օղլի Ղազարը: Նա տեսել ու կրել է բոլոր այն տառապանքները, որոնց ենթարկուել է հայութիւնը 1743-1748 թուականների ընթացքում Նադիր-Շահի եւ վերջինիս յաջորդների վարած դաժան քաղաքականութեան հետեւանքով: Այդ ժամանակաշրջանում ծաւալուած քաղաքական իրադարձութիւնները նա կարողացել է իւրովի վերաշարադրել իր վիպական երգերում՝ դաստաններում: Բաղեր-Օղլին հեղինակ է նաեւ սիրային ու խրատական խաղերի, որոնք թէեւ յօրինուած են աշուղական բանարուեստի զանազան հնարաններով, սակայն դրանց մէջ թէ՛ գեղարուեստական կատարման եւ թէ՛ արտայայտուած խոհերի ու զգացմունքների առումով խիստ նուազ է հեղինակային անհատական կնիքը: Այս երեւոյթը բնորոշ է առհասարակ աշուղական բանաստեղծութեանը:

Նոր Զուղայի կամ պարսկահայ աշուղական դպրոցը տուել է մի շարք այլ շնոր-

46 Հայ ժողովրդի պատմութիւն, հտ. IV, Երեւան, 1972, էջ 551:

հալի ներկայացուցիչներ՝ Ամիր-Օղլի, Արդին-Օղլի Հայրապետ, Ղուլ Յովհաննէս, Յարթուն-Օղլի եւ ուրիշներ (տե՛ս էջ 142-270), որոնք բաւական ընդլայնել են աշուղական երգերի թեմատիկան եւ բանարուեստը:

Ըստ երեւոյթին, ժէ. դարի երկրորդ կէսին Երեւանում է ապրել ու գործել աշուղ Սաֆար-Օղլին: Յայտնի է նրա հեղինակած մի դաստանը, որտեղ նկարագրուած է 1679 թ. Երեւանում տեղի ունեցած երկրաշարժը:

Ժամանակի անուանի աշուղներից Դոնի Ժնուել եւ գործել է Նուխիում, Արտեմը՝ Գանձակում, Սեֆերը՝ Վանում, Շերեան-Օղլու Միսաւրը՝ Խարբերդում: Արեւմտեան Հայաստանի բնակավայրերից ելած աշուղներից շատերը հանդէս են եկել նաեւ Պոլսում, որը հայ աշուղութեան կենտրոններից է եղել: Այստեղ է համբաւաւոր դարձել Չերեան-Օղլու Մինասը՝ ստեղծելով իր աշուղական շարքիներն ու դաստանները:

Ժէ.-ԺԸ. դարերում աշուղութեան խոշոր կենտրոն է եղել նաեւ Թիֆլիսը, որտեղ հանդէս են եկել թուրքերէն ստեղծագործած բազմաթիւ հայ աշուղներ: Նրանցից է աշուղ Դոստին, որի աշակերտն է եղել մեծագոյն աշուղը՝ Սայեաթ-Նովան: Վերջինս Թիֆլիսի հայ աշուղների մէջ առաջինն էր, որ, թուրքերէնից բացի, ստեղծագործել է նաեւ հայերէն (եւ վրացերէն): Սայեաթ-Նովան, սակայն, միակ աշուղն էր, որն, ինչպէս նշել ենք, «իր հանճարի զօրութեամբ» դուրս է եկել աշուղութեան սահմաններից եւ վերածել խոշորագոյն բանաստեղծի: Բնականաբար, նա խոր հետք է թողել հետագայ թիֆլիսեան եւ առհասարակ գրեթէ բոլոր աշուղների վրայ:

Թիֆլիսեան աշուղական դպրոցի նշանաւոր ներկայացուցիչներից են Օսմի Մելքոն, Բուրաղ Օղլանը, Քիչիք-Նովան, Ֆրէլդուր (տե՛ս էջ 271-328): Յատկապէս համբաւաւոր է եղել Շամչի Մելքոն (Գուլքանեանց), որը նոյնպէս, թուրքերէնից

զատ, ստեղծագործել է Հայերէն եւ վրացերէն: Նրանից պահպանուել են սիրերգեր, պարսաւական-երգիծական եւ ներբողական խաղեր: Նշանաւոր է նրա այն դաստանը, որտեղ նկարագրուել է 1795 թ. Աղա-Մահմադի արշաւանքի ժամանակ Թիֆլիսի աւերումը:

Մի շարք աշուղական դպրոցներ եւ շնորհալի անհատ աշուղներ են գործել նաեւ ԺԹ. դարում՝ մինչեւ յաջորդ դարի առաջին տասնամեակները: Նրանցից յիշատակելի են Ծիրիմը, Սէլադը, Գիրջի-Նաւէն, Նիրամին, Սազային, Ջամալին եւ շատ ու շատ ուրիշներ:

Ամենից աւելի բեղմնաւոր ու համբաւաւոր է եղել Ջիւանին (Սերոբ Լեւոնեան): Նա վերջին նշանաւոր հայ աշուղն է, որի ստեղծագործութեամբ աւարտուել է ուշ միջնադարից սկիզբ առած Հայ աշուղութիւնը, որը, որքան էլ Հայացուած, բայց պատկանում էր համարեւելեան երգարուեստին: Ջիւանին, լինելով վերջին խոշոր Հայ աշուղը, իր մեծ տաղանդի ուժով դնում է նաեւ նորի հիմքերը՝ լիովին ազգայնացնելով աշուղութիւնը: Նա, ինչպէս գրում է Գ. Լեւոնեանը, «շատ շուտով ոչ

միայն թողնում է թուրքերէնը, այլեւ Հայերէնի է վերածում հասարակութեան կողմից սիրուած թուրքերէն շատ աշուղական երգեր ու երգախառն հեքիաթներ, հանդիսանալով հիմնադիրը աշուղական հայկական դպրոցի»⁴⁷:

Ջիւանու եւ նրա հիմնած հայկական-ազգային աշուղական դպրոցի ներկայացուցիչների ստեղծագործութեան մէջ արդէն գերակշռում, ապա բացառապէս իշխում է Հայերէն երգը՝ թէ՛ բանաստեղծական, թէ՛ երաժշտական առումով: Նշուած դպրոցը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ վերադարձ դէպի ազգային-ժողովրդական, այն է՝ գուսանական երգը: Այդ դպրոցի աւանդութիւնների լաւագոյն կրողներն ու զարգացնողներն էին նոր շրջանի ժողովրդական երգիչներ Շերամը, Հաւասին, Աշոտը, Շահենը եւ ուրիշներ, որոնք գիտակցաբար, թէ ինքնաբուխ ներկայացան հանրութեանն իբրեւ գուսաններ: Այդ, ինչպէս նաեւ արդի մեր ժողովրդական երգիչների ստեղծագործութիւններն, ըստ էութեան, վերաբերում են Հայ գուսանութեան նոր եւ նորագոյն շրջանին:

47 Գ. Լեւոնեան, Երկեր, էջ 233:

ՅՈՎՀԱՆ ՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սուսանա Յովհաննիսեան

Նստիւմ է Յովհաննէս Գոմակեանի ծննդեան 150-ամեակին

Մինչեւ Առաջին աշխարհամարտի սկիզբը Թումանեանը չէր եղել Արեւմտեան Հայաստանում: Իսկ երբ պատերազմը վտանգեց Հայ ժողովրդի կեանքը, եւ Արեւմտեան Հայաստանը դարձաւ ռազմական գործողութիւնների թատերաբեմ, երբ արդէն տարիներ առաջ սկսուած ցեղասպանութիւնը լայն թափ ստացաւ, բանաստեղծը 7 ամսուայ ընթացքում՝ 1914 թ. նոյեմբերից 1915 թ. յունիս, երկու անգամ ուղեւորուեց Արեւմտեան Հայաստան՝ Ալաշկերտի, Բայազետի շրջան, Վասպուրական աշխարհ:

Գրողի առաջին ուղեւորութիւնը Արեւմտեան Հայաստան պայմանաւորուած էր Հայ կամաւորական ջոկատների գործունէութեամբ:

Պատերազմի սկզբում Կովկասում Ռուսաստանի վարած քաղաքականութիւնը երկդիմի էր: Հայ կամաւորական ջոկատները ձեւաւորուել էին փոխարքայ Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի եւ Հայոց ազգային բիւրոյի բանակցութիւնների արդիւնքում: Սակայն ռուսական իշխանութիւնները միաժամանակ սկսել էին խոչընդոտել կամաւորների գործունէութեանը՝ հնարաւորինս խանգարելով Հայերի համախմբմանը: Եթէ սկզբնական շրջանում Հայ կամաւորների սխրանքները գրուատանքի էին արժանանում, ապա շատ չանցած ցարական կառավարութիւնը սկսել էր անհանգստանալ, որ կամաւորների պայքարը կարող է ամբողջ Հայութեան մէջ առաջացնել անկախութեան ձգտում, ինքնավարութիւն ձեռք բերելու պահանջ: Ուստի

սկսել էին տարածել Հայ զինուորներին անուանարկող, շինծու, սադրիչ լուրեր, թէ իբր Հայ կամաւորները զբաղուած են թաւանով, վատ են վարուել թուրք եւ քուրդ խաղաղ բնակչութեան հետ, չեն ենթարկուել ռուսական հրամանատարութեանը եւ այլն: Ռուսներն ամէն կերպ աշխատում էին բաժանել կամաւորական խմբերը, որպէսզի միասնական հայկական զօրք ու բանակ չձեւաւորուէր: Այս ամէնը չէր կարող չանհանգստացնել Հայութեանը: «Ջգուելի պրովոկացիան շատ պարզ է», գրում էր Էջմիածնի դիւանապետ Բագրատ եպիսկոպոսը կաթողիկոսին¹: Վեհափառը՝ Գեւորգ Ե. Սուրենեանցը, կարգադրում է ժամանակի հոգեւոր նշանաւոր գործիչներին՝ Թիֆլիսի եւ Արարատեան թեմի առաջնորդներ Մեսրոպ եւ Խորէն (Մուրադ-բէկեան)² եպիսկոպոսներին գործուղել պատերազմի դաշտ:

Ռազմաճակատ մեկնող յանձնախմբի մասնակիցների ընտրութիւնը կատարում է Վրաստանի եւ Իմերեթիայի Հայոց հոգեւոր թեմի առաջնորդ եւ Ազգային բիւրոյի պատուաւոր նախագահ Մովսէս եպիսկոպոս Տէր-Մովսիսեանը: Հայ հոգեւոր գործիչներից ու մտաւորականներից ձեւաւորուած խմբի կազմում էին Յովհաննէս

1 ՀՀԱԱ, ֆ. 288, ց. 1, գ. 7, թ. 31:
2 Նոյն թուականի ասորիին Խորէն եպ. Մուրադ-բէկեանը ցանկութիւն էր յայտնել ընդունելու թումանեանի նախագահած Հայ գրողների կովկասեան ընկերութիւն եւ յօգուտ գրական ֆոնդի 20 ու. Աուիրատութիւն էր արել: Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 1914, թիւ 79, ասորիի 16, էջ 3: